

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 107-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԽՆԴՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

«Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 107-Ն» որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Սպիտակ համայնքի 2023 թվականի ֆոնդային բյուջեով չնախատեսված եկամուտների, ֆոնդային և վարչական բյուջեներով չնախատեսված ծախսերի ֆինանսավորման անհրաժեշտությամբ:

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

1. 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի հայտերով նախատեսված սուբվենցիոն ծրագրերի նախագծանախահաշվային աշխատանքները ավարտվել են և ճշգրտվել են շինարարական աշխատանքների նախահաշիվներ-ծավալաթերթերը, որից հետո անհրաժեշտություն առաջացել կատարել փոփոխություններ 2023 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային դասակարգումների միջև: Այդ նպատակով պետք է կատարել պակասեցումներ ծախսային դասակարգումներում և վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե: Նաև նախատեսվում է 2023 թվականի ֆոնդային բյուջեում մուտքեր անշարժ գույքի օտարումից:

1) Կատարել պակասեցումներ, մասնավորապես.

- «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 տնտեսագիտական դասակարգման հոդվածից 3 000 000 ՀՀ դրամ,

- «Պաշտպանություն» գործառական դասակարգման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 տնտեսագիտական դասակարգման հոդվածից 2 000 000 ՀՀ դրամ,

- «Ճանապարհային տնտեսություն» գործառական դասակարգման «Տրանսպորտային սարքավորումներ» 5121 տնտեսագիտական դասակարգման հոդվածից 40 000 000 ՀՀ դրամ և «Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր» 5511 տնտեսագիտական դասակարգման հոդվածից 12 000 000 ՀՀ դրամ,

- «Շրջակա միջավայրի պաշտպանություն» գործառական դասակարգման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 տնտեսագիտական դասակարգման հոդվածից 4 000 000 ՀՀ դրամ և «Աճեցվող ակտիվներ» 5131 տնտեսագիտական դասակարգման հոդվածից 1 000 000 ՀՀ դրամ,

- «Ջրամատակարարում» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» 5112 տնտեսագիտական դասակարգման հոդվածից 25 300 000 ՀՀ դրամ,

- «Փողոցային լուսավորություն» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» 5112 տնտեսագիտական դասակարգման հոդվածից 4 000 000 ՀՀ դրամ և «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 տնտեսագիտական դասակարգման հոդվածից 2 000 000 ՀՀ դրամ,

